ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԿԳՄՄՆ «ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ
ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ »ՊՈԱԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Տարբերակված ուսուցման մեթոդով շախմատի խնդիրների լուծումը

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝ Վարդենիս

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հասմիկ Բեյբության

ՈՒՍՈՒՑԻՉ՝ Համլետ Բազոյան

ԴՊՐՈՑ՝ Կարճաղբյուրի Ա. Գրիգորյանի անվան միջն. դպրոց

2023թ.
ՎԱՐԴԵՆԻՍ

Բովանդակություն

Ներածություն_____3
Գրական ակնարկ_____7
Փորձարարական հետազոտություն_____10
Խմբի նկարագիր_____10
Հետազոտության ընթացք_____11
Փորձարարական դաս 1_____11
Փորձարարական դաս 2_____12
Եզրակացություն_____13
Օգրագործված գրականության ցանկ_____14
Հավելված
Դասապլան 1
Դասապլան 2

Ներածություն

Շախմատ առարկայի ուսուցման ներդրումը չափազանց կարևոր էր դպրոցական ծրագրերում:Շախմատ առարկայի նպատակն է՝ ձևավորել և զարգացնել կրտսեր դպրոցականների մտավոր կարողությունը, ուշադրությունը, հիշողությունը, աշխատասիրությունը, կամքի ուժը, նպատակասլացությունը և համբերությունը: Ակնկալվող արդյունքներն են՝ ծրագրի միջոցով զարգացնել կրտսեր դպրոցականների մտավոր կարողությունը, որը կնպաստի մյուս առարկաները ավելի դյուրին ըմբռնելուն, ինչպես նաև բացահայտել շախմատային օժտվածությամբ երեխաների:

«Շախմատ» առարկայի ուսուցումը տարրական դպրոցում ունի կրթական մեծ ներուժ, որը պայմանավորված է հետևյալ առանձնահատկություններով.

- շախմատը նպաստում է սովորողների տրամաբանական մտածողության զարգացմանը,
- շախմատում զարգացվում և կատարելագործվում են սովորողի երևակայությունը, վերլուծական կարողությունները՝ դրանով իսկ նպաստելով ուսումնական մյուս առարկաների արդյունավետ ուսումնասիրմանը,
- շախմատում դրսևորվում է նպատակին հասնելու համար հետևողական և քրտնաջան աշխատանքի անհրաժեշտությունը, որը նպաստում է աշակերտի հոգևոր աշխարհի ձևավորմանը,
- շախմատը, պարունակելով գիտության, արվեստի և սպորտի տարրեր, աշակերտի մեջ զարգացնում է ինքնուրույն աշխատանքի միջոցով հաջողությունների հասնելու կարողություններ:

Արվեստի առումով այն զարգացնում է աշակերտի ճաշակը, գեղեցիկն ընկալելու և գնահատելու կարողությունները: Սպորտի տեսանկյունից շախմատը զարգացնում է աշակերտի կամային որակները, մինչև վերջ պայքարելու, օբյեկտիվ լինելու, ճիշտ գնահատելու, ինչպես նաև արժանապատիվ պարտվելու կարողությունները: Շախմատը նպաստում է նաև աշակերտի ինքնադրսևորմանը, բարդ իրավիճակներում կողմնորոշվելու կարողությունների ձևավորմանը: Վերոնշյալ առանձնատակությունների շնորհիվ շախմատը ձեռք է բերում եզակի կրթական

նշանակություն: Ելնելով վերոնշյալից՝ պահանջ առաջացավ շախմատը ներառելու տարրական դպրոցի ուսումնական պլանում:

Շախմատի ուսուցումն ունի նաև իր ուսումնական նպատակները, այն է՝

- ձևավորել և զարգացնել աշակերտի մտավոր կարողությունները,
- ձևավորել և զարգացնել աշակերտների ինքնակազմակերպման և ինքնուրույն գործունեության կարողություններն ու հմտությունները,
- զարգացնել աշակերտի ուշադրությունը, երևակայությունը, կամքի ուժը, աշխատասիրությունը, նպատակասլացությունը, համբերությունը,
- զարգացնել աշակերտի հիշողությունը,
- բացահայտել շախմատային օժտվածությամբ երեխաների:

Որպես հանրակրթության պարտադիր բաղադրիչ՝ շախմատ առարկան ունի իր դասավանդման հիմնասկզբունքները, որոնք ուղեցույցի դեր են կատարում շախմատ դասավանդող ուսուցիչների համար՝ ապահովելու ինչպես թույլ և միջին, այնպես էլ ուժեղ կարողությունների տեր երեխաների ուսուցումը՝ համաձայն նախօրոք հաստատված ուսումնական պլանի:

Այսպիսով, շախմատ առարկայի դասավանդման հիմնական սկզբունքներն են.

- շախմատային կրթության անհրաժեշտությունը բոլոր սովորողների համար,
- յուրաքանչյուր աշակերտի համար հասանելիության ապահովումը,
- առարկայի ուսուցմանը սովորողների ակտիվ մասնակցությունը,
- առարկայի ուսուցման գործնական ուղղվածությունը:

Ըստ Կրթության և գիտության նախարարության հաստատած չափորոշչի՝ սովորողներին ներկայացվող պահանջները բաժանվում են 3 խմբի՝ համաձայն ուսուցման շերտային դասակարգման սկզբունքի: Ըստ այդմ՝ շախմատի դասավանդումը պետք է երաշխավորի Ա, Բ և Գ խմբերի աշակերտների պատշաճ ուսուցումը, որի արդյունքում նվազագույն, միջին և բարձր մակարդակի գիտելիքներով, կարողություններով և հմտություններով պետք է ապահովվեն տարրական դասարաններում սովորող բոլոր աշակերտները:

Շախմատի արդյունավետ դասավանդման շնորհիվ և արդյունքում սովորողը պետք է՝

1. գիտակցի և արժևորի շախմատի դերը երևակայության, տրամաբանական մտածողության, կամային որակների, դժվարին իրավիճակներում կողմնորոշվելու կարողությունների ձևավորման և զարգացման գործում,
2. գնահատի արդարությունն ու ազնվությունը,
3. կարևորի ուշադիր և կենտրոնացված աշխատանքը,
4. գիտակցի համագործակցված աշխատանքի կարևորությունը,
5. գիտակցի շախմատ առարկայի անհրաժեշտությունը մյուս ուսումնական առարկաների ուսումնասիրության համար,
6. հետաքրքրություն հանդես բերի շախմատ առարկայի նկատմամբ, գեղագիտական արժեքներ հայտնաբերի շախմատային ստեղծագործությունների նկատմամբ, հրճվանքի զգացում ունենա խնդիրներ լուծելիս,
7. ունենա սեփական մտածելակերպի և կարողությունների նկատմամբ վստահություն,
8. գիտակցի շախմատ առարկայի կարևորությունը անձի հետազոտական գործունեության, ինչպես նաև ինտուիցիայի զարգացման համար,
9. գիտակցի շախմատային գիտելիքների կարևորությունը՝ հիմնավորված որոշումներ կայացնելու խնդրում:

Շախմատը ըստ ձևի խաղ է, բովանդակությամբ՝ արվեստ, իսկ խաղին տիրապետելը ու դժվարությամբ՝ գիտություն: /Տիգրան Պետրոսյան/:

ՈՒսուցիչն իր էությամբ և գործադրած մեթոդների բազմազանությամբ պետք է սովորողների մեջ առաջացնի դասավանդվող առարկայի խոր,գիտական տիրապետման ցանկության ձգտում:

Դա հուսալի երաշխիք է ուսման արդյունավետ կազմակերպման,աշակերտների մեջ գիտելիքները ինքնուրույնաբար համալրելու ունակություն պատվաստելու համար:Սովորաբար սովորողների մոտ սովորելու ցանկություն առաջանում է ,երբ նրանց հետաքրքրում է դասավանդվող առարկան:

ՈՒստի ուսուցիչը դասը պետք է կառուցի այնպես,որ նոր նյութը մատուցվի հետաքրքիր ձևով:

Իմ կարծիքով դրան հասնելու միջոցներից է սովորողների հետ տարվող անհատական աշխատանքը:

Գրական ակնարկ

Ներկա ժամանակներում դպրոցներում լայնորեն կիրառում են տարբերակված ուսուցման մեթոդը՝ որպես նորարարություն, որը հնարավորություն է տալիս բարելավել յուրաքանչյուր ուսումնառողի կրթական կարիքները՝ իր ունակությունների, շահերի եւ հնարավորությունների սահմաններում: Տարբերակված ուսուցում կիրառում են ոչ միայն այն դեպքում, երբ աշակերտներին առանձնացնում են ըստ ունակությունների, այլ նաև այն դեպքում, երբ նրանք չեն կարողանում լիովին յուրացնել ուսումնական ծրագրերը: Ուսումնառություն կազմակերպելիս պետք է հաշվի առնել ուսումնառության ոճերը: Օրինակ՝ մաթեմատիկական և արվեստի ուղղվածություն ունեցող դպրոցական աշակերտներին խնդրեցին վերարտադրել տարբեր Դա է պատճառը, որ նույն նյութն հաղորդելիս պետք է ընտրել տարբեր գործիքներ (Зарецкий В.К. Москва): Տարբերակված ուսուցում մեթոդն իրականացնելու դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի եւ թեմայի ուսումնասիր- ման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրե- րում: Նա առանձնացնում է ընդհանուր դաստիարակչական խնդիրները, որոնք առանձին աշակերտների մոտ հաճախակի են դրսեւորվում: Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձեւերի ընտրության միջոցով (անհատական, խմբային, էքսկուրսիա, դասղեկական ժամ, արտադասարանական միջոցառումներ եւ այլն) առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը: Օրինակ՝ խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները, միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիքներ, ընդօրինակել միմյանց եւ այլն: Հասակակիցների խմբում աշակերտն ավելի ազատ է արտահայտում իր մտքերն ու դատողությունները, գործում է անկաշկանդ, ինչն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը: Անհատական աշխատանքում դաստիարակվում է աշակերտների ինտելեկտուալ

պատրաստականությունը դժվարությունները հաղթահարելու գործում, ձեւավորվում են համառության, ինքնակազմակերպման եւ ինքնավերահսկման ընդունա- կություններ: Տարբերակված ուսուցում կարելի է կազմակերպել երկու եղանակով՝ խմբային և անհատական: Խմբային տարբերակման ժամանակ սովորողները առաջադրանքները լուծում են երեք - չորս հոգով (խմբերով), իսկ երկրորդ դեպքում՝ աշխատում են անհատապես: Երկու դեպքում էլ սովորողին տրվում է հետադարձ կապ՝ մի դեպքում խմբի համար, իսկ մյուս դեպքում՝ ստուգվում է յուրաքանչյուր սովորողի աշխատանքը(*Климова Н.В 2009)*:

Տարբերակված ուսուցման մեթոդի նպատակները.

Տարբերակված ուսուցման ժամանակ յուրաքանչյուր դասարան կարելի է բաժանել 4 տիպաբանական՝ A, B, C և D խմբերի (*Климова Н.В 2009)*:

A խմբում սովորում են <<օժտված տաղանդավոր>> աշակերտները: B խմբում՝ լավ գիտելիքներ և առաջադիություն ունեցողները: Այս երկու խմբերի համար տարբերակված ուսուցումը ունի հետևյալ նպատակները.

·Գիտելիքների խորացում· Բարդ խնդիրներ լուծելու հմտության զարգացում·Անհատական հմտության զարգացում·Գիտական գրականությունից ինքնուրույն օգտվելու զարգացում C խմբում սովորում են բավարար գիտելիքներ ունեցողները, իսկ D խմբում՝ նվազագույն շեմը չհաղթահարողները: Վերջիններիս համար տարբերակված ուսուցման նպատակներն են (*Климова Н.В 2009)*.

Կրկնություն, նոր թեմայի յուրացում՝ հաջորդ աշխատանքը գրելու համար Աշխատանքային հմտությունների զարգացում, ինքնուրույն աշխատելու հնարավորություն

·Խաղերի օգնությամբ հետաքրքրության առաջացում, տրամաբանական առաջադրանքների ինքնուրույն լուծում

·Վերարտադրել սովորած նյութը կամ լուծված խնդիրը

·Նվազագույն գիտելիքների յուրացման շեմը ներկայացնելու հմտություն

Տարբերակված ուսուցման մեթոդի դրական և բասացական կողմերը.

Տարբերակված ուսուցումը ունի իր դրական և բացասական ազդեցությունը

սովորողների վրա (Зинудин А. А. 2004): Աշակերտների տարբերակումը ուժեղ, միջին և թույլ առաջադիությունների ունի ոչ միայն առավելություններ, այլ նաև թերություններ: Հագեցած դասերը, ծանրուսումնական նյութերը խթանում են շնորհաշատ աշակերտներին, իսկ այն աշակերտները, որոնք ունեն դանդաղ զարգացման տեմպ. այս պարագայում սովորելու ցանկությունը կորցնում են, և ուսումնառությունը դառնում է ծանր պարտականություն: Ի. Ս. Յակի-մանսկին կարծում է,որ ուսուցման սկզբնական շրջանում անհրաժեշտ է ստեղծել երեխայի զարգացման համար այնպիսի միջավայր, որտեղ նա իրեն կդրսևորի իր կարողությունների բոլոր կողմերով և 7-8-րդ դասարաններում,

երբ հստակ երևում է սովորողների ընդունակությունները,կարելի է կիրառել տարբերակված ուսուցում՝ տարբեր մակարդակներով:

Հաշվի առնելով կրթական կարիքները՝ տարբերակված ուսուցում իրականացնում են նաև կազմակերպչական ռազմավարությունից ելնելով՝ միևնույն ունակությունների տեր աշակերտներին նույն հոսքում ուսուցանելով (Ամիրջանյան Յու. 2005): Այս տարբերակումների իմաստ ընդհանուր ունակությունների գաղափարն է: Այսպես, օրինակ, արտասահմանյան շատ երկրներում կան թեքումով դպրոցներ (օրինակ՝ լեզուների թեքումով դպրոց, որտեղ խորացված ուսումնասիրում են անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իսպաներեն, պարսկերեն և այլն), որտեղ հենց նշված առարկաների խորացված ուսուցում է կազմակերպվում: Արտասահմանյան երկրներում տարբերակված ուսուցման հիմքում ընկած է այն պնդումը, որ մարդու ընդունակությունները պայմանավորված են ընդունակության գործոնով, և սովորելու ժամանակ կարևոր է ուսումնառողի մտածողությունը, այլ ոչ թե նրա հիշողությունը և ուշադրությունը: Այս հայեցակարգից ելնելով՝ շատ մանկավարժներ սովորողների մտավոր ունակությունները բացահայտելու համար դիմում են թեստերի օգնությանը:

Փորձարարական հետազոտություն

Խմբի նկարագիրը

Ես իմ հետազոտական աշխատանքը անցկացրել եմ Գեղարքունիքի մարզի Կարճաղբյուրի միջնակարգ դպրոցի 4-րդ դասարանում: Այս դասարանում սովորում են 17 աշակերտ՝ 9 աղջիկ և 8 տղա, որոնք ունեն տարբեր առաջադիություն և հմտություններ: Շախմատ անցնում են շաբաթական 2 ժամ: 3-րդ դասարանում արդեն նկատելի էր յուրաքանչյուր աշակերտի կարողությունն այս առարկայից: Այս դասարանի հիմնական խնդիրն է աշակերտների ներգրավվվածությունը դասապրոցեսի մեջ, ինչը պատճառ դարձավ, որ ես իմ հետազոտական աշխատանքը իրականացնեմ միջին կարողությունների տեր 3 աշակերտների համար կազմակերպել տարբերակված ուսուցում անհատական եղանակով, իսկ մնացած աշակերտների հետ կկատարենք տարբեր բնույթի աշխատանքներ և խաղեր՝ հաշվի առնելով յուրաքանչյուրի կարողությունները և հմտությունները:

Փորձարարականդաս-1

Այսօրվա իմ դասն է <<Մատային դիրքեր ստեղծել>>-ը (տե՛ս Դասապլան-1): Դասաժամը սկսվեց ներկա _բացակա անելով, ապա տնային հանձնարարությունների ստուգումով, որոնք որոշ աշակերտների մոտ սխալ էին գրված: Քննարկվեց տնային աշխատանքների թյուրըմբռնումները և ճշգրտվեց: Այնուհետև ներկայացվեց դասի թեման և նպատակները: Գծեցի շախմատի խաղատախտակ, այնուհետև այն բաժանեցի 4 մասի, յուրաքանչյուր մասի որոշ վանդակներում դնում է աստղանիշեր, իսկ խաղատախտակից դուրս պատկերում խաղաքարեր, որոնք աշակերտները պետք է տեղադրեն աստղանիշով դաշտերում այնպես, որ ստացվեն մատային դիրքեր:Բացատրեցի լուծման եղանակը, որոշ հուշումներ արեցի :Այնուհետև զույգ-զույգ նստած աշակերտների հանձնարարեցի մեկը մյուսի համար կազմել նմանատիպ խնդիրներ և լուծել: Տվեցի որոշ ժամանակ:

Տարբերակված ուսուցման մեթոդն օգտագործելով հարցերի և առաջադրանքների միջոցով չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար աշակերտները հնչեցրին իրենց համար անհասկանալի հարցերը, տրվեց լրացուցիչ բացատրություններ:

Դասն ավարտվեց տնայն աշխատանքի հանձնարարումով. 1 վարժություն ցածր առաջադիմություն ունեցող աշակերտների համար և մեկ վարժություն միջին և բարձր առաջադիմություն ունեցող աշակերտների համար:

Փորձարարական դաս -2

Դասի սկզբում կատարվեց ներկա-բացակա: Ստուգվեց տնային աշխատանքները: Դասը նախորդ դասի շարունակությունն էր, կողք կողքի նստած աշակերտները միմյանց փոխանցեցին տանը կազմած խնդիրները և սկսեցին լուծել դրանք: Հետաքրքիր է այն, որ աշակերտները մեծ ոգևորությամբ և պատրաստակամությամբ էին կատարում աշխատանքը:Այնուհետև ստուգվեց խնդիրները և քննարկվեց աշակերտների կողմից: Դրանից հետո դասը կազմակերպվեց հետևյալ կերպ. աշակերտները բաժանվեցին 4-ական խմբերի, ամեն խմբում ընդգրկված էին և՛ գերազանց, և՛ թույլ առաջադիմությամբ սովորողներ: Հանձնարարեցի յուրաքանչյուր խմբի երկուական խնդիր: Այնուհետև հետևում է աշակերտների աշխատանքին և ուղղորդում: Գերազանց սովորող աշակերտները խնդիրները լուծեցին՝ համագործակցելով թույլ առաջադիմություն ունեցող աշակերտների հետ: Արդյունքում թույլ աշակերտները տրված խնդիրները լուծեցին խաղատախտակի վրա: Դասի ավարտին հանձնարարվեց նոր դասը, բացատրվեց և որպես տնային աշխատանք՝ հանձնարարվեց տրամագիր 2-ը և տրամագիր 3-ը:

Եզրակացություն

Աշակերտների ներգրավվածությունը ապահովելու համար՝անցկացվեց 2 տարբերակ-ված դասեր: Իմ ուշադրության կենտրոնում եմ պահել հիմնականում միջին նցածր առաջադիմություն ունեցող աշակերտներին, որն էլ պատճառ հանդիսացավ նրանց ներգրավվածությանը դասապրոցեսին, ինչպես նաև նրանց հնարավորություն տրվեց ձեռք բերել ինքնուրույն աշխատելու հմտություն: Աշակերտները խոստովանեցին, որ բանավոր տրամադրված հետադարձ կապը ավելի արդյունավետ է:Վերլուծելով հետազոտական դասերի արդյունքները, եկա այն եզրակացության, որ ներգրավվածության բարձրացումը պայմանավորված է հետևյալ գործոններով.

1. տարաբնույթ տարբերակված վարժությունների կատարում տարբեր առաջադիմություն ունեցող աշակերտների համար
2. հարցադրումներ և տարբերակված ուսուցում մեթոդների կիրառում դասաժամերին
3. գրավոր և բանավոր հետադարձ կապի տրամադրում
4. տարբերակված առաջադրանքների լուծում և քննարկում
5. թեմայի հիշեցում, ամրապնդում և ամփոփում՝ անհատական աշխատանքների միջոցով

2. Գրականության ցանկ

1. Ամիրջանյան Յու. Ա., Սահակյան Ա. Ս. <<Մանկավարժություն>> Մանկավարժ 2005

2. http://cis.chessacademy.am>article

3. Շախմատ, 4-րդ դասարանի ուսուցչի ձեռնարկ /Համլետ Թումանյան 2013թ.

4. Շախմատ, 4-րդ դասարանի դասագիրք /Համլետ Թումանյան 2021թ.

Chapter

Դասապլան-1

Ուսուցիչ՝ Համլետ Բազոյան

Առարկա՝	Շախմատ	Ամսաթիվ	19 .09.2023թ.	Կիսամյակ	1	Դասարան	4
Թեմա՝	Մատային դիրքերի ստեղծում						
Օգտագործվող նյութեր	4-րդ դասարանի շախմատի դասագիրք, շախմատի տետր, շախմատի խաղատախտակ, խաղաքարեր, հասարակ մատիտ,գրիչ, գրատախտակ:						
Դասի նպատակը՝	• Ուղղորդել սովորողներին, ստեղծել ստեղծագործական միջավայր՝ սովորողների մոտ ձևավորել մատային դիրքեր ստեղծելու համար • Ուսուցանել դիրքի գնահատումը • Ձևավորել այլընտրանքային, բազմատարբերակային մտածողություն սովորողների մոտ • Շախմատի խնդիրներ լուծելը և տրամաբանելը						

ՈՒսուցման փաստեր, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ

Վերջնարդյունքները	Աշակերտները կկարողանան՝ • ստեղծել մատային դիրքեր՝ օգտագործելով 5-ից ավելի խաղաքարեր • ստեղծել մատային դիրքեր՝ փոփոխելով խաղաքարերի գույնը • գնահատել և վերլուծել դիրքը, որոնել և գտնել այլընտրանքային ուղիներ՝ կիրառելով մարտավարական հնարքներ • վարել ազնիվ, գրագետ խաղ՝ պահպանելով խաղի հիմունքները • լուծել և տրամաբանել շախմատի խնդիրները

Գործողու-թյուններ Ժամ/ տևողութ.	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	Ուսումնական գործունեություն Ուսուցիչ	Հարցադրումներ	Կիրառ-վող մեթոդներ

Սկիզբ-5-րոպե Ընթացք-30-35 րոպե	Բացել դասագրքերը, պատրաստվել նոր դասին: Ներկայացնել տնային աշխատանքները նոթանում են դասի թեմային և նպատակներին Պատասխանել հարցերին Գրատախտակից արտապատկերում են ուսուցչի գծած խաղատախտակը և ուսուցչի ուղղորդմամբ զույգզույգ նստած աշակերտները փորձում են լուծել խնդիրը	Բարևել դասարանին, ներկա-բացակա անել, ստուգել տնային աշխատանքները բացատրել եղած սխալները Ներկայացնում է դասի թեման և նպատակները Գրատախտակին գծում է շախմատի խաղատախտակ, այնուհետև այն բաժանում է 4 մասի, յուրաքանչյուր մասի որոշ վանդակներում դնում է աստղանիշեր, իսկ խաղատախտակ	Միայնակ թագուհիով հնարավո՞ր է մատ հայտարարել: Ինչպե՞ս է հնարավոր մեկ փղով ստեղծել մատային դիրք:	Համագոր ծակցայի ն մեթոդ

	Աշակերտները զույգ-զույգ նստած	ից դուրս պատկերում է խաղաքարեր, որոնք աշակերտները պետք է տեղադրեն աստղանիշերով դաշտերում այնպես, որ մատային դիրք ստացվի,		

Ավարտ-5րոպե	մեկը մյուսի համար կազմում են նմանատիպ խնդիրներ և սկսում լուծել: Աշակերտները վերլուծում են ճիշտ և սխալ կազմած խնդիրները և տետրի մեջ գրում՝ խնդիրը ճիշտ էր լուծված: Լուռ լսում են ուսուցչի արած պարզաբանումները	բացատրում լուծման եղանակը Որոշ հուշումներ է անում Լսում է աշակերտների պատասխանը և խնդրում , որ զույգ-զույգ նստած աշակերտները կազմեն նմանատիպ խնդիրներ իրար համար Ուսուցիչը այդ ընթացքում օգնում է հարցերով, պատասխանում		

		աշակերտների հարցերին, ապա սկսում ստուգել աշակերտների կազմած խնդիրները: Ստուգում է, գտնում սխալները , բացատրում : Նոր նյութի հաղորդում,		

		հետադարձ կապ , հարցերի պատասխանում Գնահատում, տնային աշխատանքի հանձնարարում		
Տնային աշխատանք		Կազմել նմանատիպ 2 վարժություն կողքին նստած աշակերտի համար		

Դասապլան-2
Ուսուցիչ՝ Համլետ Բազոյան

Առարկա՝	Շախմատ	Ամսաթիվ	24.09.2023 թ.	Կիսամյակ	1	Դասարան	4
Թեմա՝	Մատային դիրքերի ստեղծում (շարունակություն)						
Օգտագործվող նյութեր	4-րդ դասարանի դասագիրք, շախմատի տետր, գրիչ, շախմատի խաղատախտակ,խաղաքարեր, գունավոր և հասարակ մատիտներ, A4 թղթեր, գրատախտակ						
Դասի նպատակը՝	• Սովորողների մեջ ձևավորել մատային դիրքեր ստեղծելու տրամաբանություն • ՈՒսուցանել դիրքի գնահատումը • Օգտագործելով դիրքի գնահատումը՝ սովորողների միջոցով բացահայտել մարտավարական հնարքը այլ իրավիճակներում • Լուծել շախմատի խնդիրներ						

Ուսուցման փաստեր,որոնք կփաստեն,որ ուսուցումը տեղի ունեցավ

Վերջնարդյունքները՝	Աշակերտները կկարողանան՝ • ստեղծել մատային դիրքեր՝ օգտագործելով 6-7 խաղաքարեր • ստեղծել մատային դիրքեր՝ փոփոխելով խաղաքարերի գույնը

Սկիզբ- 5րոպե Ընթացք- 30-35րոպե	Բացել դասագրքերը, պատրաստվել նոր դասին: Ներկայացնել տնային աշխատանքները Լուծում են իրենց համար կազմած խնդիրները	Բարևել դասարանին, ներկա-բացակա անել, ստուգել տնային աշխատանքները Հանձնարարում է իրար կողք նստած աշակերտներին միմյանց փոխանցել տանը կազմած խնդիրները և սկսել լուծել Հետևում է աշակերտների աշխատանքներին	Արդյո՞ք հասկանանալ ի են խնդիրները:	մագործակցային մեթոդ

	Բաժանվում են 4 խմբերի, և սկսում են լուծել ուսուցչի հանձնարարած խնդիրները, գերազանց աշակերտները օգնելով և	Ստուգում է կատարած աշխատանքները, բացատրում է թյուրըմռնումներ ը Դասարանը բաժանում է 4 խմբի՝ յուրաքանչյուր		

	բացատրելով թույլ առաջադիմութ-յուն ունեցող աշակերտներին լուծում են խնդիրը	խմբում ներառելով և՛ գերազանց, և՛ թույլ սովորող աշակերտներ Հանձնարարում է խնդիր ամեն		

Ավարտ-5 րոպե	Լսում են նոր դասը, պատասխանում հարցերին	խմբին 2-ական: Ստուգում է աշակերտների կողմից լուծած խնդիրները Նոր նյութի հաղորդում: Պատասխանում է հարցերին:		
Տնային աշխատանք		Տրամագիր 2, 3:		